



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՆՆՎԱԾՍԻՆԻ լրսփոփոխման միջոցների կենտրոնի  
ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ**

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ  
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61

Էլ.փոստ՝ [meo@ypc.am](mailto:meo@ypc.am)

## **ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Վերջին տարիներին Հայաստանում անցկացված համապետական ընտրությունների լուսաբանման դիտարկումները վեր են հանել մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավին նախորդող եւ քարոզարշավի ժամանակաշրջաններում Երևանի մամուլի ակումբի իրականացրած մշտադիտարկմամբ պարզվել է, որ եթե օրենսդրության պահանջները լրատվամիջոցները հիմնականում պահպանում են, ապա էթիկական սկզբունքները պահպանելու առումով որոշ խնդիրներ դեռ առկա են:

Այսպես, արձանագրվել են դեպքեր, երբ պետական բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային հանդիպումների ժամանակ իբրեւ ֆոն օգտագործվել են կուսակցական խորհրդանիշներ, նախընտրական ծրագրերը վերլուծելիս դրսևորվել է կողմնակալ մոտեցում, անհասկանալի ընտրությամբ եթեր է հատկացվել տարածքային մի քանի թեկնածուների՝ անտեսելով նրանց մրցակիցներին, հարցազրույցների ժամանակ տարբեր վերաբերմունքի են արժանացել «յուրային» եւ «օտար» թեկնածուները եւ այլն:

Այդ խնդիրները նկատի ունենալով՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը մշակել է ուղեցույց՝ հիմք ընդունելով նաեւ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 7-րդ՝ **«Ազնվություն ընտրությունները և հանրաքվեները լուսաբանելիս»** բաժնի դրույթները:

Ուղեցույցը խորհրդատվական բնույթ ունի:

## **1. Լրատվամիջոցների վարքը ընտրություններ նշանակելու օրվանից մինչև նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի սկիզբը**

Այս ժամանակաշրջանում կուսակցությունները եւ թեկնածուները, նախապատրաստական աշխատանքներ տանելով, ձգտում են հնարավորինս շատ երեւալ հանրությանը՝ օգտագործելով նաեւ ՁԼՄ-ների հնարավորությունները:

Թեպետ ՀՀ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածն ասում է. «**Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը**», այսուհանդերձ, լրատվամիջոցներին խորհուրդ ենք տալիս այս ժամանակաշրջանում.

- կուսակցությունների, ձեւավորվող դաշինքների եւ թեկնածուների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելիս առաջնորդվել համընդհանուր ընդունված անաչառության, անկողմնակալության, փաստերի ու կարծիքների տարանջատման եւ այլ էթիկական սկզբունքներով,

- ձգտել, որ կուսակցությունների, հնարավոր դաշինքների եւ ապագա թեկնածուների վերաբերյալ տեղեկությունները չվերածվեն թաքնված քաղաքական գովազդի,

- հնարավորինս սահմանափակել կուսակցական գործիչների ոչ քաղաքական, այսինքն՝ մասնագիտական գործունեության կամ պաշտոնական պարտականությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների տարածումը, եթե այդ տեղեկությունները հանրային նշանակություն չունեն:

## **2. Լրատվամիջոցների վարքը նախընտրական քարոզչության շրջանում**

Այս ժամանակաշրջանում լրատվամիջոցների գործունեությունը կարգավորվում է ՀՀ Ընտրական օրենսգրքի 20-րդ՝ «**Նախընտրական քարոզչությունը զանգվածային լրատվության միջոցներով**» հոդվածով:

Հիմնականում այս ժամանակաշրջանին է վերաբերում նաեւ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 7-րդ բաժինը, որը նախատեսում է.

*7.1. բոլոր կուսակցությունների և թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող,*

*7.2. չվիրավորել թեկնածուների անձը, չծաղրել նրանց հայացքներն ու տեսակետները,*

*7.3. չհրապարակել թեկնածուների հասցեին զրպարտություն, շանտաժ ու սպառնալիք պարունակող նյութեր,*

*7.4. բոլոր թեկնածուներին իրենց ծրագրերը և տեսակետները ներկայացնելու համար լրատվամիջոցում հավասար հնարավորություն տալ, վճարովի տեղ կամ եթերաժամ հատկացնելիս՝ լրատվամիջոցում ապահովել հավասար սակագնային պայմաններ,*

*7.5. չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր: Այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից կամ այդ մասին պետք է նշում կատարել,*

*7.6. հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որևէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցները նման մտադրություն ունենալու դեպքում այդ մասին նախապես և հստակ հայտարարեն:*

Հարկ է հստակեցնել, որ Կանոնագրի այս բաժնի 7.2 կետը վերաբերում է լրատվական նյութերին: Մեկնաբանություններում եւ վերլուծություններում այդ կետում նշվածը (բացառությամբ վիրավորանքի) կարող է տեղ գտնել:

Պետք է նկատի ունենալ, որ ե՛ւ ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ, ե՛ւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածները անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվության պահանջ սահմանում են միայն լրատվական թողարկումների համար:

Տպագիր եւ առցանց լրատվամիջոցները որևէ թեկնածուի կամ կուսակցության աջակցելու մասին հայտարարությունը պետք է պարբերաբար կրկնեն:

### **Խորհուրդներ.**

- հարցազրույցներ վարելիս բոլոր հյուրերին հավասար, միատեսակ եւ անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել,

- հեռուստահաղորդումների ժամանակ (ռեպորտաժ, հարցազրույց, բանավեճ, թոք-շոու եւ այլն) տեխնիկական գործիքները, վիզուալ հնարքները օգտագործելիս նույնպես ցուցաբերել հավասար, միատեսակ եւ անկողմնակալ մոտեցում. տեսախցիկով և լուսային էֆեկտներով չընդգծել թեկնածուների արտաքինի վատ կամ լավ կողմերը, հնարավոր արատները, չընտրել մի թեկնածուին ոչ նպաստավոր, մյուսին ընդհակառակը՝ համակրելի ներկայացնող դիմախաղերով ու շարժումներով կադրերը,

- հիշել նաեւ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 1.6 կետի պահանջը. «չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում և տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու և միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին»,

- նախընտրական ծրագրերը վերլուծելիս չառաջնորդվել համակրանքներով ու հակակրանքներով եւ կողմնակալ չլինել,

- պաշտոնյաների աշխատանքային այցերը լուսաբանելիս ընտրել այնպիսի կադրեր կամ լուսանկարներ, որոնցում չեն երևում կուսակցական խորհրդանիշներով պաստառներ,

- հարկ է, որ հեռուստաընկերությունները միմյանցից լրատվական սյուժեներ վերցնելիս նշեն սկզբնաղբյուրը եւ ձգտեն ինքնուրույն պատրաստել ուղեկցող տեքստը,

- լուսաբանումների հավասարություն ապահովելու նպատակով, խուսափել նախկինում պատրաստած այնպիսի տեսաֆիլմերի կամ ռեպորտաժների հեռարձակումից, որտեղ կա կուսակցություններին անդրադարձ, կամ որտեղ ցուցակներում ընդգրկված քաղաքական գործիչները հայտնվում են կադրերում՝ թեկուզ եւ ոչ քաղաքական գործունեությամբ: Այս կերպ է պետք վարվել նաեւ լռության եւ քվեարկության օրերին,

- համապետական ընտրությունների ժամանակ տարածքային թեկնածուների վերաբերյալ խմբագրական լուսաբանումներն ընդունելի են միայն այն դեպքում, եթե խմբագրությունը տարածքային մյուս թեկնածուների քարոզարշավը նույնպես լուսաբանելու հնարավորություն է ունենալու:

### **3. Խորհուրդներ լռության օրվա վերաբերյալ**

Տպագիր լրատվամիջոցները սովորաբար այդ օրը լույս չեն տեսնում՝ խուսափելով անգամ նախորդ օրվա քաղաքական անցուդարձը լուսաբանելուց: Այսուհանդերձ, ստորեւ առաջարկվող խորհուրդը նաեւ նրանց է վերաբերում, եթե հրատարակվում են լռության օրը.

- հեռուստաընկերություններին եւ ցանցային լրատվության միջոցներին խորհուրդ չի տրվում լռության օրը հեռարձակել նյութեր՝ կուսակցական գործիչների կամ ցուցակներում ընդգրկված պետական պաշտոնյաների վերաբերյալ, եթե տեղեկությունը հանրային նշանակություն չունի: Իսկ այս դեպքում լուսաբանումը սահմանափակել չոր տեղեկատվական ոճով:

### **4. Խորհուրդներ քվեարկության օրվա վերաբերյալ**

Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ քվեարկության օրը քարոզչությունն արգելված է՝ խորհուրդ է տրվում.

- քվեարկության օրը հնարավորինս խուսափել ուղիղ եթերով հաղորդումներից. խոսակցի որեւէ արտահայտություն, ակամա արտասանած բառ կամ թույլ տված վրիպում կարող է դիտարկվել որպես քարոզչություն, հետեւաբար եւ օրենքի խախտում,

- բարձրաստիճան պաշտոնյաների քվեարկությունը լուսաբանելիս ե՛ւ տեքստում, ե՛ւ լուսագրերում հարկ է նրան ներկայացնել իր պաշտոնով, այլ ոչ թե կուսակցական պատկանելությամբ, կամ կուսակցական ցուցակի համարով եւ ընտրել այնպիսի կադրեր, լուսանկարներ, որ քվեարկությանը մասնակցող կուսակցությունների, դաշինքների կամ թեկնածուների պաստառները չերեւան,

- դիտորդի հետ հարցազրույցում հստակ նշել, թե որ կազմակերպությունից է հավատարմագրված,
- ընտրատեղամասում բանավեճերի մեջ չմտնել հանձնաժողովի նախագահի, անդամների, դիտորդների, վստահված անձանց, քվեարկողների հետ,
- ցանկացած խախտման մասին ահազանգ կամ տեղեկություն տարածելուց առաջ ստուգել մի քանի հասանելի աղբյուրներից,
- իր կամ գործընկեր լրագրողների օրինական մասնագիտական գործունեության խոչընդոտումների վերաբերյալ անմիջապես իրազեկել հանձնաժողովի նախագահին, իրավապահ մարմիններին, ԿԸՀ-ին եւ հանրությանը:

***Ընդունվել է 2017թ. նոյեմբերի 16-ին ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի՝***

***Վայքում կայացած արտագնա նիստում:***

*ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:*